LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆ
ԳՐԱՆՑՈՂ-ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՈՂ/ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2022Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՏՀ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԳՐԱՆՑՎԵԼ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- Քվեարկելու համար գրանցվելու ամենահեշտ մեթոդը առցանց է **LAVOTE.GOV**-ում:
- Ընտրողների գրանցման դիմումները հասանելի են նաև կառավարական շենքերի մեծ մասում, ինչպիսիք են գրադարանները, DMV-ի գրասենյակը և Նորվոքի Ռեգիստրերի գլխավոր գրասենյակը:
- Ընտրողները պետք է գրանցվեն քվեարկելու համար մինչև **հոկտեմբեր 24-ը**՝ այս ընտրությունների համար «Փոստային քվեաթերթիկ» ստանալու համար:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՍՏՈՒԳԵԼ ԻՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ:

- • Ընտրողները կարող են ստուգել իրենց գրանցման կարգավիճակը և տեղեկատվությունը առցանց՝ **LAVOTE.GOV/VRSTATUS** կայքում կամ զանգահարել (800) 815-2666, տարբերակ 2 հեռախոսահամարով:

ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԱՐԴՅՈՔ ԴԵՌ ՔՎԵԱՐԿԵԼ, ԵԹԵ ՉԵՄ ՀԱՍՑՐԵԼ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ:

- Այո՛: Ընտրելու իրավունք ունեցող ցանկացած ընտրող, ով բաց է թողել **հոկտեմբեր 24-ի** վերջնաժամկետը, կարող է անձամբ քվեարկել քվեարկության ցանկացած կենտրոնում L.A. վարչաշրջանի՝ ընտրողների պայմանական գրանցման միջոցով (նույն օրը գրանցում):

ԵՐԲ ՊԵՏՔ Է ԹԱՐՄԱՑՆԵԼ ԻՄ ԸՆՏՐՈՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Եթե ընտրողը տեղափոխվել է, փոխել է իր անունը կամ ցանկանում է փոխել իր քաղաքական կուսակցական պատկանելությունը, նա կարող է թարմացնել իր գրանցումը **LAVOTE.GOV** կայքում: Քվեարկողների համար, ովքեր տեղափոխվել են շրջանից կամ նահանգից, խնդրում ենք կապվել գրանցման գրասենյակ (800) 201-8999 տարբերակ 2՝ հեռախոսահամարով, ձեր գրանցումը չեղարկելու համար, կամ այցելեք **LAVOTE.GOV**՝ ներբեռնելու Չեղյալ գրանցման ձևը:

ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ե՞ՐԲ ԿՍՏԱՆԱՄ ԻՄ ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ:

- Փոստային քվեարկությամբ քվեաթերթիկները **հոկտեմբեր 6-ից** փոստով ուղարկվում են գրանցված բոլոր ընտրողներին:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՀԵՏԵԻԵԼ ԻՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ

- Ընտրողները կարող են հետևել իրենց քվեաթերթիկին՝ բաժանորդագրվելով **Where's My Ballot-ին** **california.ballottrax.net** կայքում: Սա անվճար բաժանորդագրություն է, որն ավտոմատ ծանուցումներ է ուղարկում տեքստային, էլեկտրոնային փոստով կամ ձայնային փոստով ձեր քվեաթերթիկի կարգավիճակի վերաբերյալ:

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ԳՏՆԵԼ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՆԵՐՔՅՄԱՆ ՔՎԱՏՈՒԹԵՐԻ ՎԱՅՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ:

- Առցանց **LAVOTE.GOV-ում:**
- Ընտրողի բնակության վայրի մոտ գտնվող քվեատուփի հարմար վայրերի ցանկը ներառված է «փոստային Քվեարկություն» փաթեթում:

ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԾՐԱՐԸ:

- Գրանցողը ստուգում է վերադարձի ծրարի ստորագրությունը՝ ընտրողի գրանցման գրանցամատյանում ստորագրությամբ՝ իրավասությունը հաստատելու համար:

ԱՐԴՅՈ՞Ք ԵՄ ՊԵՏՔ Է ՆՇԵՄ ԻՄ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՕՐՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԾՐԱՐԻ ՎՐԱ, ԿԱՄ՞ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՕՐՎԱ ԱՄՍԱԹԻՎԸ

- Մուտքագրեք քվեաթերթիկը վերադարձնելու ամսաթիվը: Եթե քվեարկողը դրա փոխարեն մուտքագրի իրենց ծննդյան ամսաթիվը, քվեաթերթիկը դեռ կմշակվի և վավերացնելուց հետո, կհաշվարկվի ընտրությունների գիշերը:

ԵՐԲ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵՄ ԻՄ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ:

- Ընտրողները կարող են վերադարձնել իրենց քվեաթերթիկն այն ստանալուն պես:
- Բոլոր քվեաթերթիկները ՊԵՏՔ Է փակվեն փոստային կնիքով և վերադարձվեն մինչև ընտրությունների օրը:
- Մեր գրասենյակը կընդունի քվեաթերթիկները, որոնք փակցված են քվեարկության օրը և ստացվել են ընտրությունների օրվանից հետո 7 օրվա ընթացքում:

LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳՐԱՆՑՈՂ-ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՈՂ/ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2022Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՏՀ

ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՍԿ ԵԹԵ ԵՍ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ՉԵՄ ՍՏԱՑԵԼ ԿԱՄ ԱՅՆ ՎՆԱՍՎԱԾ Է

- Ընտրողները կարող են փոխարինող քվեաթերթիկ պահանջել **LAVOTE.GOV/REPLACEBALLOT** կայքում: Փոխարինում խնդրելու վերջին օրը **նոյեմբերի 1-ն** է:
- Զանգահարեք (800) 815-2666, տարբերակ 2 հերախոսահամրով կամ էլ. Նամակ ուղարկեք votebymail@rrcc.lacounty.gov ձեր լրիվ անուն-ազգանունով, ծննդյան տարեթիվով և հասցեով:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՀԱՆՋԵԼ ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ՏԱՐԲԵՐ ԼԵԶՎՈՎ:

- Լրացրեք և վերադարձրեք Լեզվի հարցման ձևաթուղթը, որը գտնվում է Նմուշի քվեաթերթիկի հետևի մասում:
- Զանգահարեք Գրանցողի բազմալեզու ծառայությունների բաժին (800) 815-2666, տարբերակ 3:
- Աջակցվող լեզուներ՝ հայերեն, չինարեն, քմերերեն, պարսկերեն, կորեերեն, իսպաներեն, տագալոգերեն, վիետնամերեն, հնդկերեն, ճապոներեն, թայերեն, ռուսերեն, բիրմայերեն, թելուգուերեն, գուջարաթիերեն, ինդոնեզերեն, մոնղոլերեն և բենգալերեն:

ԱՆՁԱՄԲ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆՁՄ ՔՎԵԱՐԿԵԼ:

- Ընտրողները **հոկտեմբեր 29-ից** սկսած հնարավորություն կունենան անձամբ քվեարկել քվեարկության ցանկացած կենտրոնում:
- Քվեարկության կենտրոնները բաց կլինեն ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 19:00-ը, իսկ ընտրությունների օրը՝ 7:00-ից մինչև 20:00:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԳՏՆԵԼ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ:

- Այցելեք **LOCATOR.LAVOTE.GOV**՝ «Քվեարկության կենտրոն» հավելվածը դիտելու համար կամ զանգահարեք (800) 815-2666, տարբերակ 1 համարով:
- Հավելվածը ցուցադրում է Los Angeles վարչաշրջանի քվեարկության կենտրոնի բոլոր վայրերը և սպասման գնահատված ժամանակը:
- Յուրաքանչյուր գրանցված ընտրողին մայիսի կեսերին փոստով կուղարկվի առանձին նամակագրություն, որտեղ նշված կլինեն Քվեարկության կենտրոնի մոտակա վայրերը իրենց տանը:

ԵՐԲ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆՁԱՄԲ ՔՎԵԱՐԿԵԼ:

- **Հոկտեմբեր 29-ից** ընտրողները կարող են այցելել Քվեարկության ցանկացած կենտրոն:
- Օգտվե՛ք վաղաժամ քվեարկության հնարավորություններից և վաղ քվեարկե՛ք:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՔ ԱՊԱՀՈՎ ՊԱՀՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ COVID-19-ԻՑ

- Բոլոր քվեարկության կենտրոնները հետևում են հանրային առողջապահության և անվտանգության ընթացիկ ուղեցույցներին:
- Ընտրական աշխատողները կանոնավոր կերպով կկրեն դեմքի դիմակ և կմաքրեն մակերեսները:
- Ընտրողներին խստորեն խրախուսվում է դիմակ կրել:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՔՎԵԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- Կալիֆորնիայի օրենքը չի պահանջում, որ գրանցված ընտրողները քվեարկելիս ցույց տան անձը հաստատող փաստաթուղթ:
- Այնուամենայնիվ, եթե ընտրողն առաջին անգամ է գրանցվում, նա պետք է ներկայացնի վավեր պետական անձը հաստատող փաստաթուղթ կամ Սոցիալական ապահովության համարի վերջին չորս թվանշանները: